ԶԼՄ Էթիկայի դիտորդ մարմնի փորձագիտական եզրակացությունը «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի՝ ընդդեմ «Առավոտ» օրաթերթի դիմումի կապակցությամբ

Քննարկելով ընդդեմ «Առավոտ» օրաթերթի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի դիմումը՝ թերթի 2010 թվականի հուլիսի 7-ի համարի «Աղջիկս երդվել է իմ արյունով լվացվել» հոդվածում կրոնական թշնամանք եւ ատելություն քարոզելու վերաբերյալ, ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմինը եզրակացնում է.

1. Յուրաքանչյուր անհատ լրագրող կամ մասնավոր լրատվամիջոց հասարակական ցանկացած խնդրի վերաբերյալ կարող է ունենալ իր անհատական կարծիքը կամ ուղղվածությունը, որն արտահայտված է խմբագրական տեսակետի մեջ: Այս առումով ընդունելի է կրոնական թեմատիկայի վերաբերյալ «Առավոտ» օրաթերթի ուղղվածությունը եւ այն հետեւողականորեն լուսաբանելը:

2. Բողոքում «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնը անդրադառնում է «Աղջիկս երդվել է իմ արյունով լվացվել» հոդվածում «Առավոտ» օրաթերթի կողմից «հոգեորսություն» թեզի անտեղի օգտագործմանը, նշելով, որ թերթը չի կարող ներկայացնել մի երեւույթ, որի համար չի տրվում իրավական սահմանում: Այս առումով Դիտորդ մարմինը եզրակացնում է, որ թերթը պարտավորված չէ օգտագործել այնպիսի թեզեր, որոնք ունեն իրավական սահմանում, ուստի ‘հոգեորսություն’ բառը կարող է օգտագործվել:

3. «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնը նշում է այն մասին, որ հոդվածում վարկաբեկվում է ՀՀ Պետռեգիստրի կողմից գրանցում ստացած կազամակերպություն: Այնուամենայնիվ, Դիտորդ մարմինը գտնում է, որ Պետռեգիստրի կողմից գրանցված լինելու փաստը դեռեւս արգելք չի հանդիսանում, որպեսզի թերթը, ունենալով որոշակի փաստեր, իր կարծիքն արտահայտի տվյալ կազմակերպության մասին՝ օգտագործելով խոսքի ազատության իր իրավունքը:

4. Ըստ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի՝ «Աղջիկս երդվել է իմ արյունով լվացվել» հոդվածում «Առավոտ» օրաթերթի կողմից ներկայացված է կոնֆլիկտի միայն մեկ կողմի տեսակետը: Սակայն, քանի որ երկրորդ կամ երրորդ կողմերը տվյալ հոդվածում անորոշ են, թերթը պարտավորված չէր ներկայացնել որեւէ այլ կարծիք, քան թերթին տեղեկություններ տրամադրած անձի եւ լրագրողի կարծիքները:

5. Դիտորդ մարմինը արդարացի է համարում «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի բերված բողոքի այն մասը, ըստ որի՝ «Աղջիկս երդվել է իմ արյունով լվացվել» հոդվածում ներկայացված փաստերը «Առավոտ»

օրաթերթը ընդհանրացնում է հոդվածի համատեքստում հիշատակված կազմակերպությունների հետ: Դիտորդ մարմինը գտնում է, որ հոդվածում նկարագրված է կոնկրետ մասնավոր դեպք, եւ այդ դեպքի հետ կապված բացասական տպավորությունների տարածումը դրա հետ որեւէ առնչություն չունեցող կազմակերպությունների վրա՝ անթույլատրելի է մասնագիտական էթիկայի տեսակետից:

Հարգելով «Առավոտ» թերթի՝ կրոնական թեմատիկային անդրադառնալու եւ սեփական տեսակետները ներկայացնելու իրավունքը, Դիտորդ մարմինը հարկ է համարում հիշեցնել 2007 թվականի մարտի 10-ին ընդունված Վարքականոնի ՝ 1.3 կետը.

«1.3 վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա»:

Ընդունվել է ԶԼՄ-ների Էթիկայի Դիտորդ մարմնի
2010 թվականի սեպտեմբերի 11-ի նիստում